ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 97-Ա
« 11 » ԱՊՐԻԼԻ 2025Թ

ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի տեղակալ Արսեն Խաչատրյանին 2025 թվականի ապրիլի 14-ին գործուղել ք. Երևան, մասնակցելու համապետական շաբաթօրյակի նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ ձևավորելու և կազմակերպչական օպերատիվ հաղորդակցությունն աշխատանքային կարգով իրականացնելու վերաբերյալ քննարկմանն և 2025 թվականի ապրիլի 15-ին՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունում կայանալիք աշխատանքային խմբի հերթական նիստին՝ Հայաստանի Հանրապետությունում անտառային հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով:
2. Գլխավոր հաշվապահին՝ Արսեն Խաչատրյանի գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ, ճանապարհածախս, գիշերավարձ) կատարել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ներքին գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք.Եղեգնաձոր